

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

16. 05. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Պապոյանը, Ա. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Զանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Ն. Համբարձումյանը, Ա. Բաղդասարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ
Ա. Չատինյանը - ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Անկախության 25-ամյակի միջոցառումների կազմակերպման և անցկացման մարզային հանձնաժողովի կազմի և կատարած աշխատանքների վերաբերյալ - զեկ. Ն. Սարգսյան
2. Սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ -զեկ. Հ.Պապոյան
3. ա/ Սովորողների գիտելիքների ստուգման եվ ավարտման կարգի վերաբերյալ
բ/ <<Վերջին դասի>> հետ կապված միջոցառումների վերաբերյալ - զեկ. Մ.Սայադյան
4. ա/<<Հայքրմուղկոյուղու >> և <<Լոռիքրմուղկոյուղու>> սպասարկման տարածքների` համայնքներին պատկանող գույքի հանձնման վերաբերյալ
բ/,Սմարթ,, կենտրոնի և Թումանյան համայնքի հետ կապված հարցերի վերաբերյալ -զեկ.
Ա. Զանազյան
5. Վարչական վերահսկողության աշխատանքների կատարման վերաբերյալ - զեկ. Ա.Սահակյան
6. Թումանյանի տարածաշրջանի համայնքներում կարկտահարության պատճառած վնասի վերաբերյալ-
զեկ. Գ. Հակոբյան
7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մ. Սայադյանին`

ա) ՀՀ Անկախության 25-ամյակի կապակցությամբ Լոռու մարզի համայնքներից ստացված միջոցառումների ծրագրերի հիման վրա կազմել և ներկայացնել մարզային միջոցառումների ծրագիր:

բ) Անհրաժեշտ հսկողություն սահմանել հանրակրթական դպրոցներում <<Վերջին դասի>> և ավարտական միջոցառումների կազմակերպման և անցկացման նկատմամբ, որպեսզի հնարավորինս բացառվի ապօրինի և պարտադրված դրամահավաքը:

2. << Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների ղեկավարների կողմից համայնքներում առկա ջրամատակարարման համակարգը և գույքը ջրամատակարար կազմակերպություններին որպես սեփականություն հանձնման գործընթացի նկատմամբ:

/ Ժամկետ՝ 01.06.2016թ/

ԼՈՐՐԻ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՋԱՆԱԶՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/